ԹԻՎ 14 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«23» նոյեմբերի 2025թ.
ք. Էջմիածին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 36-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի նոյեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքում տեղի են ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

2025 թվականի նոյեմբերի 17-ին թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով թվով 47 տեղամասային ընտրական հանձնաժողովների քվեարկության արդյունքների արձանագրությունները, ամփոփել է Վաղարշապատ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները և արձանագրությունով վավերացրել:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 74-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունները, վերահաշվարկի արդյունքները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, կազմում է արձանագրություն՝ համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ»:

Նշված իրավանորմի պահանջների հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հանրապետություն» կուսակցության վստահված անձանց կողմից ներկայացված՝ թիվ 14/15, 14,16 և 14/22 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի 2025 թվականի նոյեմբերի 18-ի դիմումներով կատարված և վիճակահանությամբ որոշված թիվ 14/1, 14/8 և 14/22 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի արդյունքում արձանագրվել է միայն անվավեր քվեաթերթիկների նվազում, կողմ ձայների փոփոխություններ չեն արձանագրվել, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ չի

իրականացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկ՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը 2025 թվականի նոյեմբերի 23-ին կազմել է արձանագրություն քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան հայցադիմում չի ներկայացվել:

2025 թվականի նոյեմբերի 16-ին Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրություններին նախապատրաստման և անցկացման ընթացքում իրավասու սուբյեկտների կողմից թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվել է 3 դիմում (բողոք), որոնցից երկուսին պատասխանվել է գրությամբ, իսկ մեկ դիմումով հարուցվել է վարչական վարույթ և կայացվել է թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 33-Ա որոշումը:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է 2025 թվականի նոյեմբերի 16-ին Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 2025 թվականի նոյեմբերի 16-ին, արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները և 2025թ. նոյեմբերի 21-ին ընդունել է թիվ 35-Ա որոշումը, ըստ որի՝ գրանցամատյաններում արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականներն ընտրությունների արդյունքների վրա որևէ ազդեցություն չեն ունեցել:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է նաև վերահսկիչ-վերստուգիչ ծառայության 22.11.2025թ. եզրակացությունը՝ Վաղարշապատ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով անցկացվող 2025 թվականի նոյեմբերի 16-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի և կից փաստաթղթերի ստուգման արդյունքների մասին, որում վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը փաստել է, որ բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերության համաձայն.

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, իսկ համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով համայնքում քվեարկության արդյունքների արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընդունած որոշումը, ամփոփում է համայնքում քվեարկության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով՝ թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

2025 թվականի նոյեմբերի 16-ին Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Ընտրական օրենսգրքի խախտումներ, որոնք ազդել են ընտրությունների արդյունքների վրա:

Թիվ 14 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ՝ **Գ.Նազարյան**

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ * ԹԻՎ 14